

группами, касающимися разных сфер жизни.

FEATURES OF ATTRIBUTES EXPRESSED BY A NOUN IN THE GENITIVE CASE USED IN NOUN PHRASES

S. K. KHANDANYAN

In this article we mainly consider the noun phrases, with substantivized attributes in genitive case. The latter are represented by certain semantic groups that relate to different sectors and spheres of life.

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹԻՆ ՆԱՅԱՆԳԻՆ ՍԻՍԱԿԱՆ» ԵՐԿՈՒՄ

Յ. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՊՀ դասախոս

Ստեփանոս Օրբելյանի գործածած նոր բառերի մեծ մասը կազմված են հայերենի բառակազմական օրինաչափություններին համապատասխան: Ինչպես նշում է Լ. Հովսեփյանը. «գրաբարի բառակազմական կաղապարների բազմազանությունը, ինչպես նաև հիմքային զուգաձևությունների առատությունը նպաստում են անհատական բառակերտմանը և հնարավորություն տալիս ստեղծելու ոճական բազմազանության աղբյուր հանդիսացող հարամվանական և հոմանշային շարքեր»:

Նոր բառեր ստեղծելու և ընդհանրապես բառապաշարի հարստացման հիմնական միջոցներից են բառաբարդումը և ածանցումը:

Բառաբարդում: Համադրական բարդություններ:

Օրբելյանը նոր բառերի մեծ մասը ստեղծել է բառաբարդման սկզբունքով, հայերենին հատուկ բառակազմական կաղապարներով: Դրանք հիմնականում իսկական բարդություններ են, որոնց բաղադրիչները միացել են **ա** հոդակապով և ունեն մեկ ընդհանուր շեշտ: Բացի **ա** հոդակապից, զգալի թվով բարդություններում հոդակապի դերով հանդես է ե ձայնավորը, որը հիմնականում գործում է ի-ով վերջացող բառ-բաղադրիչների դեպքում (ի+ա>ե), ինչպես՝ գերեթափ, բարեբոյս, բարեպատճառ, ոսկետուտ և այլն: Իսկական բարդությունների ամենատարածված կաղապարներն են՝

1. Գոյական + հոդակապ + բայարմատ՝ աղօթահալրդոր, աստուածաբնակ, աստուածաընկալ, աստուածակոխ, աստուածաթող, աստուածագումար գետաւարար , գերեթափ, դժոխսահրաւեր, խաւարահրաւեր, ծովամատոյց, ծնրահանգոյց, կամարակապ, կարակնակերտ, ջրագնաց, սագաշէն, սովամածոյց, քարագնաց, քարաշէն, քարատաշ, քրթաքաղ:

Բաղադրյալ բառերի մեծագույն մասում անվանական հիմքը համընկել է ուղ-

ղական հոլովածին, իսկ բայականը՝ բայարմատին, ինչպես՝ աղօթախորդոր, աստուածամուխ, աստուածակոխ, գերեթափ, գետաւարար, սագաշէն, քարաշէն և այլն: Երբեմն բայական հիմքը համընկնում է անցյալ կատարյալի հիմքին, օրինակ՝ ջրագնաց, քարագնաց, ձայնընկեց, որոշ բառերում բայահիմքը հանդես է եկել պատճառական ածանցով՝ ծովամատոյց, ծնրահանգոյց, սովամածոյց:

Հոգեցատուր, առատատուր, դառնալուր բառերում բայահիմքը համընկնում է բուն հրամայականին (վերջին երկուսում սկզբի հմքերը ածականներ են):

2. Գոյական + հոդակապ + գոյական՝ (ց)այգապաշտօն, բոցաթոյն, գերեզին, գմբեթայարկ, դասապատիւ, մեղսատեսակ, ոսկետտուն, քալասրահն և այլն: Ինչպես տեսնում ենք, սրանց անվանական հիմքերը համընկել են բացառապես ուղղական հոլովածին:

3. Ածական + հոդակապ + գոյական՝ ազատազարմ, ահագնաեռանդ, բարեբոյս, բարձրակառաջ, բարձրամայր, բարեպատճառ, բացախօր, բնասար, գեղեցկավայր, գեղեցկահասակ, գիշամահ, զար, հեշտավայր, հրաշածն, մեծաժողով, մեծանձնեաց, մեծապայման, մեծապաղատ: Այս կառույցներում գոյականական հիմքը արտահայտված է ուղղական հոլովածով (բացառությամբ՝ մեծանձնեաց), իսկ ածականական հիմքը բարեբոյս, գիշամահ, բնասար, ահագնաեռանդ բառերում գործածվել է հնչյունափոխված ձևով (բարի, գէշ, բուն, ահագին):

4. Ածական + հոդակապ + ածական՝ դառնադաժան, ահեղասքանց, խակակիրթ, մեծասքանչ, մեծաբարոյ, պերճապաճոյճ:

5. Ածական + հոդակապ + բայարմատ՝ առատատուր, բարձրահայեաց, գիշախանձ, դառնալուր, խոտորախօս, հրաշալուր, քաղցրահայեաց:

Օրբելյանի պատմության մեջ գործածված բարդություններում գործում են նաև բառակազմական այլ կաղապարներ: Այսպիսի կաղապարները քիչ են հանդիպում: Այսպես՝

- բայարմատ + հոդակապ + բայարմատ՝ զարմանատիպ, զարմանահիւս, զինաքաղ, զղջախոհ,
- դերանուն + հոդակապ + գոյական՝ ամենապատիկ, բոլորապոյր,
- մակբայ + հոդակապ + բայարմատ՝ բազմածախ, յոգնակառաջ, կրկնանորոգ, յոգնատեղեակ,
- մակբայ + հոդակապ + գոյական՝ հանդիպակշիռ, հաստատագիծ մշտապաշտօնք, յոգնամեղ:

Սակավ կիրառությամբ հանդիպում են նաև տարբեր կաղապարներով անհոդակապ իսկական բարդություններ, ինչպես՝ աստուածընկալ, նաւաստոգի, ջրտու, սոյնգունակ, փառորսակ¹, քաջուլորակ:

Բարդությունների բաղադրիչները զանազան շարահյուսական հարաբերություններ են արտահայտում: Այդ հարաբերությունը սովորաբար ստորադասական է, առաջին բաղադրիչը հանդես է գալիս իբրև երկրորդի լրացում, այսինքն՝ բարդության գլխավոր անդամը հայերենում վերջին բաղադրիչն է:²

Օրբելյանի նորակազմությունները հիմնականում համապատասխանում են

¹ Հանդիպում են նաև բարդածանցավոր բառեր՝ բարձրահայեցիկ, դիւրապետութիւն, հեշտապաշտակութիւն, փառորսակ, քաջուլորակ ևն:

² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 201:

բառակազմական այս օրինաչափությամբ: Սակայն *դասապատիւ* բառում այս նույն օրենքը չի գործում. այստեղ գերադաս անդամը առաջին բաղադրիչն է, լրացումը՝ երկրորդ, բառը նշանակում է աստիճանակարգ:

Համադասական հարաբերություններ են արտահայտում ածական + հոդակապ + ածական կաղապարով բարդությունների բաղադրիչները, օրինակ՝ բարձրահոգակ, գեղագեղ, պերճապաճոյճ, մեծահոգակ և այլն, ինչպես նաև բայարմատ + հոդակապ + բայարմատ՝ զարմանահիւս, զարմանատիպ:

Ածանցում: Ածանցումը հայերենի բառակազմության գործուն միջոցներից է. ածանցները՝ որպես բառակազմական ձևույթներ, «կարող են հանդես գալ երկու դերով՝ գոյաբանական-իմաստաբանական և լեզվական: Առաջին դեպքում նրանք հիմքային իմաստին ավելացնում են նոր իմաստ կամ փոխում են նրա սկզբնական իմաստային արժեքը, երկրորդ դեպքում նրանք որոշում են լեզվական կաղապարների մեջ միավորների գրավելիք տեղերը, դրանց համապատասխան փոփոխությունները: Ըստ լեզվական կաղապարների մեջ միավորների գրավելիք տեղի՝ բառակազմական ձևույթները դասակարգվում են նախածանցների և վերջածանցների»:³

Օրբելյանի հեղինակած նորակազմությունների շարքում ածանցման կաղապարները զգալի կշիռ ունեն: Հեղինակը ածանցավոր բառեր է կերտել թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ հիմքերից՝ նախապատվությունը տալով վերջածանցավոր կազմություններին: Այստեղ կարելի է հանդիպել թե գրաբարյան, թե միջին հայերենին բնորոշ ածանցներով կազմված նոր բառեր:

Նախածանցավոր կազմություններ:

Ան - անայլալակ, անգումանի, աներեկ, անգրաւական, անխախտ, անխառնուրդ, անխաչ, անմեղադիր լինել, անհամիմազ, անպայքար, անվայր.

Առ - առապար.

Բաց - բացահոր, բացափայլումն.

Գեր - գերապանծ, գերափառ.

Համ - համագոյ.

Նախ - նախակարգութիւն, նախահազա, նախահաւատ, նախամարտել, նախանիստ, նախատօնակ.

Ներ - ներանձնաւոր.

Տար - տարժանեալ:

Վերջածանցավոր կազմություններ: Ինչպես նախածանցների դեպքում, այս դեպքում էլ հեղինակը օգտագործել է ժամանակակից հայերենում կենդանի ու գործուն ածանցներ: Սակայն դրանք գործածության միևնույն հաճախականությունը չունեն, այսպես՝

-ակ՝ բլուրակ, հնագիտակ, շրջեակ, փառորսակ, փորակ, քաջուղորակ.

-ական՝ (զ)իրաշաբանական, (զ)գրաւորական⁴, ովկիանոսական.

-անի՝ աւերանի, քնարանի.

-անոց՝ ապստամբանոց, գաղտանոց.

-անք՝ մռնռանք.

³ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 163-164:

⁴ Հեղինակը կազմել է ինչպես բարդածանցավոր, այնպես էլ բազմածանց բառեր:

-(ա)պես՝ կուրապես.
 -արան՝ խրախարան, ռաբունարան.
 -աւոր՝ անգրաւոր, խարսխաւոր, ծեռնաւոր, ճաճանջաւոր, պատշաճաւոր, ռազմաւոր, սահմանաւոր.
 -արան՝ խրախարան, ռաբունարան.
 -եալ՝ անգիտացեալ, (զ)անօրինեալ, (յ) անկուցեալ, (զ)ամբարշտեալ, ընդոստուցեալ կրօնաւորեալ, հաստաբեսեալ, հիմնարկեալ, նքօղեալ, պտուտկեալ.
 -եայ՝ քուաքատակեայ.
 -եան՝ բազմախաչեան.
 -ութիւն՝ բարեբաստութիւն, գողութիւն, դիտապետութիւն, իշխանաւորութիւն, հեշտապաշտակութիւն, հինահարութիւն, մեկնողութիւն, նախակարգութիւն, շնորհաբաշխութիւն.
 -ումն՝ բացափայլումն, սնոտիապատումն, վիմազլումն:
 Ինչպես տեսնում ենք, հեղինակը բառակազմության ժամանակ առավելապես կիրառել է ութիւն, եալ, աւոր, ալ ածանցները:⁵
 Նշենք, որ առանձին խումբ են կազմում տարբեր խոսքի մասերից կազմված բայերը՝ ախոյենանալ, զերծանել, զրաբանել, խնդամտել, խրախանալ, կոշկոծել, հաստաբեստեալ, չարակնել, պայազատել, պարսաւանդեալ, քաղաքաւարել, ներքևիլ, մծրել, նախամարտել, փրթուցանել /այս բառում առկա է -ուցան- պատճառական ածանցը/: Սրանցից բայական ան սոսկածանց ունեն հետևյալ բայերը՝ ախոյենանալ, զերծանել, խրախանալ, որջանալ: Մյուս բայերը բայածանց չունեն, և բոլորի հիմքը բաղադրյալ է, բացառությամբ՝ գերփել, մծրել, ներքևիլ, ճղել, թևել, ժտել, յօղել, նքողել պարսել: Բաղադրյալ բայահիմքերում գործում են հետևյալ բառակազմական կաղապարները՝
 1. նախածանց+արմատ՝ անգիտացեալ ան+գիտ(գետ)+աց+եալ, անօրինեալ ան+օրին (օրէն)+եալ, տարժանեալ տար+ժան+եալ, շարահարեսցուք շար-ահար+եսց+ուք (ընդ որում՝ առաջինում և վերջինում անցյալ կատարյալի հիմքերն են).
 2. արմատ+վերջածանց՝ սեպիականել սեպի (սեպուհ)+ականել, կրօն+աւոր+եալ.
 3. արմատ+հոդակապ+արմատ՝ զրաբանել զր(զուր)+ա+բանել, խնդամտել խնդ (խինդ)+ա+մտ(միտ)+ել, չարակնել, պտղաբերել, հողածնեցեալ հող+ա+ծնեց+յալ.
 4. նախածանց+արմատ+վերջածանց՝ ներանձնավորել նե+անձն+ավորել, ան+խառն+ուրդ.
 5. արմատ+արմատ՝ չարակնել չար+ակն+ել:
 Հարկ է նշել, որ Օրբելյանի հեղինակած նորակազմությունների մեջ հանդիպում են նաև վերլուծական բարդություններ, որոնք մտնում են բայի խոսքամասային համակարգի մեջ՝ լրացնելով հարադրական բայերի շարքը:
 Բառահարադրության եղանակով Օրբելյանը ստեղծել է մի քանի հարադրավոր բայեր, որոնք դիտվում են որպես վերլուծական ձևեր: Բայական հարադրությունները կամ վերլուծական ձևերը, ըստ բաղադրիչների լրացական- կախումա-

⁵ Այս ածանցով կազմված են նաև արհեստական ձևեր, ինչպես՝ իշխանաւորութիւն, մեկնողութիւն:

յին հարաբերությունների, համարվում են ստորադասական բարդություններ:⁶ Այդպիսի բարդությունների արտահայտության պլանում առկա է բայական բաղադրիչ, որ հարադրվում է անվանական հարադրին՝ բայական իմաստ հաղորդելով կապակցությամբ: Այս բարդությունների առաջին բաղադրիչը՝ անվանական միավորը, բայական հարադրության համար կատարում է հիմքի դեր, իսկ բայական բաղադրիչը ընթացայնության գաղափարի ցուցչի դեր է կատարում:

Օրբելյանի կիրառած բայական հարադրություններում հանդես են գալիս հիմնականում լինիմ և առնել բայերը, որոնք ունեն վերացարկված իմաստ, ինչպես՝ դեղակուր լինի (467), լերդախոց լինել (448), կամաթող լինել (19), ապիզար լինի (159), անմեղադիր լինել (84), հիմնախիլ առնել (257), կայծակնահար առնել (376), ընծայատու լիցի (108)...

Այս հարադրական բարդությունները կազմված են այնպիսի բայական հարադիրներով, որոնք անկախ բառային արժեք ունեն, բայց երկուսն հանդիպում են հարադրության շրջանակներում: Ընդ որում՝ հարադիրը կարող է արտահայտվել տարբեր խոսքի մասերով և կազմությամբ լինել ոչ միայն պարզ, այլև բարդ և ածանցավոր:

Այսպիսով, Օրբելյանի երկուսն հանդիպող նորակազմ բառերի քննությունից կարելի է ենթադրել, որ այդ բառերը հիմնականում իրենց ձևով ու բովանդակությամբ համարժեք են հայերենի բառակազմական օրինաչափություններին: Այս բառերի մեծ մասը հաջողված բարդություններ են և գործածական են նաև ժամանակակից հայերենում, ինչպես՝ աստվածամեծար, դառնալուր, զարմանահյուս, իշխանակույտ, հրաշալուր, հրաշածն, մեծաբարո, մեղսապարտ//մեղապարտ, փառաբնակ, քարաշեն և այլն:

Որոշ բառեր ժողովրդական կազմություն ունեն, ինչպես՝ գեղ, գերփել, եղ, եպերել դեհ, ճղել, մատակ, մին, քուեր, նույնիսկ հանդիպում է օժանդակ բայի խոսակցական ձևը՝ «մայր անդ ալ, մայր անդ ա...» (էջ 112):

Առանձին խումբ են կազմում հայերենին խորթ, արհեստական բարդությունները, որոնք ըստ կազմության բաժանվում են հետևյալ տեսակների՝

1. Բառաբարդմամբ կազմված ձևեր՝ աւելախոյզ, բազմաժողով, գիշամահ, խակակիրթ, ունայնախոյզ:

2. Ներածանցմամբ⁷ կազմված բառեր, ինչպես՝ իշխանաւորութիւն, մեկնողութիւն, հեշտապաշտակութիւն, գոյացականութիւն:

3. Վերջածանցմամբ կազմված բառեր, ինչպես՝ բացափայլումն, զիրաշաբանական, պատշաճավոր, ռազմաւոր, սահմանաւոր, թղթագնացութիւն:

Նոր բայեր Օրբելյանը կազմել է այլ խոսքի մասերից՝ դերբայական ալ, ել վերջավորությունների կցումով՝ գերծանել, թևել, ընդոտնել ժտել, խրախանալ, նախամարտել, յօդել, պայազատել, պարսել, ինչպես նաև՝ անօրինեալ, զրաբա-

⁶ Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի բառակազմություն և իմաստաբանություն, Երևան, 1989, էջ 225-227:

⁷ Այս տերմինը գործածում ենք պայմանականորեն: Ներածանցում ասելով՝ հասկանում ենք ոչ թե ավանդականորեն ընդունված նշանակությունը, երբ ածանցն ավելանում է արմատի մեջ, այլ այն իրողությունը, երբ գոյություն բառի մեջ հեղինակը գործածում է լրացուցիչ ածանց:

նել, ընդոստուցեալ, տարժանել և այլն:

Այս բառերը, ինչպես արդեն նշել ենք, վկայված են ՆՅԲ-ում, ՅԱԲ-ում և ՄՅԲ-ում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 163-164:
3. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի բառակազմություն և իմաստաբանություն, Երևան, 1989:

СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ ГНЕЗДА НОВООБРАЗОВАНИЙ В СОЧИНЕНИИ СТЕПАНОСА ОРБЕЛЯНА «ИСТОРИЯ ГУБЕРНИИ СИСАКАН»

Ջ. Խ. ԱՐՄԵՆՅԱՆ

В статье автор обращается к новообразованиям, встречающимся в сочинении Ст. Орбеляна "История губернии Сисакан", в частности, к тем их способам (словосложение, суффиксация), посредством которых они были образованы.

Новообразования, образованные как посредством синтетических, так и аналитических сложений, в основном эквивалентны по форме и содержанию словообразовательным закономерностям армянского языка. Автор обращается также к сложениям, встречающимся в сочинении, и нетипичным для армянского языка.

THE WORD-FORMATION PATTERNS OF NEOLOGISMS IN THE BOOK OF STEPANOS ORBELIAN "HISTORY OF THE PROVINCE SISAKAN"

H. KH. HARUTYUNYAN

The author refers to neologisms, occurring in the literary work of Stepanos Orbelian "History of the Province Sisakan", in particular, to those of their ways (compounding, suffixation), through which they were formed.

Neologisms, formed through both synthetic and analytical patterns, are mainly equivalents in form and content of word-formation rules of the Armenian language. The author is also drawn to the compounding occurring in this work and atypical for the Armenian language.